ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ

## 2015 - 2018 թ.

ՎԱՆԱՁՈՐ
2015

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի պետական համալսարանի Քիմիայի ամբիոնի առաքելությունն է պատրաստել խորը գիտելիքներով օժտված ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր քիմիայի, դեգործական քիմիայի և այլ հարակից (բնապահպանություն, բնագիտություն, կենսաբանություն) մասնագիտությունների գծով, ովքեր կկազմեն ազգային կրթական համակարգի և գիտելիքահենք հասարակության մաս, կբավարարեն աշխատաշուկայի մշտանորոգ պահանջները, և իբրև խորը գիտելիքներով օժտված ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր՝ իրենց նպաստը կբերեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային գիտության զարգացմանը:

Ամբիոնում իրականացվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքները միտված են քիմիայի, դեգործական քիմիայի և հարակից՝ բիապահպանություն, բնագիտություն բնագավառներում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, գիտության, առաջին հերթին քիմիայի և դեղագործական քիմիայի, ինչպես նաև հասարակական կյանքի այլ բնագավառներում անհրաժեշտ աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով, ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, իրականացնել հետևյալ առաքելությունները.

1. Նպաստել ապագա մասնագետների (քիմիկոս, դեղագործ քիմիկոս, բնապահպան) մոտ մարդ-քաղաքացու, կրթության և դաստիարակության խնդիրների , ժամանակակից մեթոդների ձևավորմանը:
2. Աջակցել մասնագիտությանը տիրապետող, մասնագիտորեն և սոցիալապես ինքնահաստատված քաղաքացու ձևավորմանը, որը կկարողանա ակտիվ մասնակցություն ունենալ կյանքի տարբեր բնագավառներում ռազմավարական խնդիրների լուծմանը և ժողովրդավարական հասարակական կարգի ամրագրմանը:
3. Ապահովել քիմիայի, դեգործական քիմիայի և այլ հարակից մասնագիտությունների առարկայական ծրագրերի որակի բարձրացումը,

առաջնորդվելով բոլոնյան գործընթացի հիմնական դրույթներով, որոնք արտահայտված են ՎՊՀ-ի ռազմավարական ծրագրերում:

*ՏԵՍԼԱԿԱՆԸ*

**1. Կրթական**

1. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի շրջանավարտներին քիմիայի, դեղագործական քիմիայի և հարակից բիապահպանություն, բնագիտություն ոլորտների մրցունակ, պրակտիկ մասնագետներ դառնալու հնարավորություն ապահովող ՀԿԾ-ների վերամշակում և ներդրում:

2. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի <<Քիմիա>>, <<Դեղագործական քիմիա>>, <<Բնապահպանություն>> մասնագիտությունների ուսանողների մոտ մասնագիտության արժևորման և հատուկ գիտելիքների ձեռք բերման, տեսության ընդհանուր օրինաչափությունների, հիմնական հասկացությունների, խնդիրների, միջոցների և դասավանդման մեթոդների մասին պատասխանատվության գիտակցության ձևավորում:

3. Այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների ՄԿԾ - ների շրջանակում նախատեսված բազմակողմանի զարգացած, գրագետ մասնագետների պատրաստման իրականացում:

4. Ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակար-դակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների և մեթոդների մշակում ու ներդրում:

5.Առարկայական ծրագրի թեմաների և բաժինների դասավանդման ժամանակ, դրանց յուրահատկությունների հիման վրա, նոր մեթոդների կիրառմամբ, ուսումնական պարապմունքների պլանավորում:

6. Ապահովել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում:

**2.Գիտահետազոտական**

1. Ակադեմիական գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների և տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների ու

հանրության հետ ամբիոնի գիտական համագործակցության շրջանակների ընդլայնում:

2. Քիմիայի ամբիոնի հեղինակության բարձրացում ներքին և արտաքին միջավայրում՝ իր կայուն տեղը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում պահպանելու և ամրապնդելու միջոցով, միաժամանակ ինտեգրվելով և մաս դառնալով միջազգային քիմիական կրթական համակարգի:

3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների կատարման և մասնագիտական աճին նպաստող միջոցառումների կազմակերպում:

4. Սովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:

5. Ամբիոնի աշխատակիցների մասնակցությունը հանրապետության գործող գիտական աստիճաններ շնորհող խորհուրդներին:

Քիմիայի ամբիոնը գործընթացը կազմակերպելու է հետևյալ հայեցակարգերի սկզբունքների հիման վրա՝

- Վերակառուցել դասավանդումը, ցուցաբերել կոմպետենցիաների վրա հիմնված ուսանողակենտրոն մոտեցում:
- Կատարելագործել (վերամշակել) քիմիայի, դեղագործական քիմիայի կրթական ծրագրերը:
- Համապատասխանեցնել քիմիայի, դեղագործական քիմիայի ծրագրերը շուկայական պահանջներին և սոցիալական կարիքներին, հետազոտական աշխատանքներում ներառել պրակտիկ և կիրառական խնդիրներ լուծող թեմաներ:
- Ներդնել կրթության որակի ապահովման նոր տեխնոլոգիաներ:
- Քիմիայի ամբիոնը համալրել գիտական նոր սարքավորումներով և գործիքներով, կատարելագործել դասավանդվող բոլոր առարկաների լաբորատոր-գործնական աշխատանքների բացատրականները և իրականացումը: Ավելի առարկայական դարձնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների խնդիրները:

- Թարմացնել և կիրառել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոն գործընթացը:
- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ առաջնորդվել նրանց արդիականության պրակտիկ խնդիրներով:
- Ապահովել ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջազգային ՈՒԳԸ կոնֆերանսներին:
- Աշխատանք տանել ամբիոնի դասախոսների երիտասարդացման և որակական խնդիրների ուղղությամբ:
- Ճիշտ ինտեգրել գիտությունը և կրթությունը:
- Ապահովել ամբիոնի դասախոսների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին:
- Ամբիոնի դասախոսների ուժերով 2015-2018 թթ. հրատարակել 25 գիտական հոդված և թեզիս, 1 բուհական ձեռնարկ:

### 3. Սոցիալ-դաստիարակչական աշխատանքներ

- Քիմիայի և դեղագործական քիմիայի տնտեսական հիմնավորում:
- ՈՒսանողների տնտեսական - քաղաքական դաստիարակության ապահովում:
- Ռազմահայրենասիրական դաստիարակություն:

### 4.Որակի ապահովման

1. Որակի մշակույթի ձևավորում և դրա ապահովմանն ուղղված որակի ներքին համակարգի կազմավորում և գործառնության նորմավորում:

2. Քիմիական, դեղագործական, ազգային, մշակութային բնագավառի՝ աշխատաշուկայի պահանջներին համարժեք մասնագետների պատրաստում :

3. ՈՒսուցման գործընթացի համակողմանի վերլուծության իրականացում և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգի ձևավորում

4. Որակի ապահովման մի շարք ընթացակարգերի կիրառում, որոնք միտված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:

## 5.Արտաքին կապեր և միջազգայնացում

Հաշվի առնելով կրթական ոլորտում ներկայիս իրականացվող բարեփոխումները և մասնագիտությունների ներդրման անհրաժեշտությունը՝ ամբիոնը արտաքին կապերի և միջզգայնացման նպատակով պետք է իրականացնի ազգային հեղինակավոր բուհերի, արտերկրի առաջատար բուհերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ մասնագիտությունների հետագա կայացման ընթացքն ապահովելու, ինչպես նաև իրականցվող հետազոտական աշխատանքները համակարգելու և դրանք շահառուների կարիքներին ծառայեցնելու նպատակով:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

| Նպատակ | Խնդիր | Պատասխանատու (կատարող) | Համագործակցություն | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/ | Սպառնալիքներ, ռիսկեր |
|---|---|---|---|---|---|---|
| **Կրթական գործունեություն** | | | | | | |
| 1.Մասնագիտության կրթական ծրագրի վերանայում և նորերի կազմում | 1. Մասնագիտության կրթական ծրագրի կազմում և վերանայում՝ գործնական բաղադրիչի ավելացմամբ, ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ: | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | Համաեվրոպական համակարգին համադրելի դառնալու համար: | |
| | 2. Առարկայական ծրագրերի և դրանց կրթական վերջնարդյունքների վերանայում՝ մասնագիտության կրթական ծրագրին համապատասխան | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | | |
| | 3. Լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում և ներդնում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | | |
| | 4. Մագիստրոսական նոր ծրագրերի և մասնագիտացումների ներդրում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում | 1. Ամբիոնի դասախոսական անձնակազմի համալրում որակյալ կադրերով | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | | |
| | 2. Միջբուհական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, դասախոսների վերապատրաստման ծրագրերի իրականացում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն | 2015-2018 ուս տարի | | |
| | 3. Մասնագիտական օտար լեզվի, համակարգչային հմտությունների, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և իրավագիտության (աշխատանքային օրենսգիրք) վերապատրաստման ծրագրերի իրականացում: | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն, որակի ապահովմն կենտրոն | 2015-2018 ուս տարի | Որակի բարձրացում | |
| 3. Դասավանդման գործընթացի կատարելագործում | 1.Դասավանդման ժամանակակից՝ տեղեկատվական, հոգեբանական և այլ մեթոդների կիրառման համալիր ծրագրի մշակում և ներդրում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն, Համալսարանի ամբիոններ | 2015-2018 ուս տարի | ՈՒսումնական պրոցեսի կատարելագործում | |
| | 2. Քիմիայի և դեղագործական քիմիայի ՀԿԾ-ների շրջանակներում միջառարկայական դասընթացների / capstone courses/ ներդրում, | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն, Համալսարանի ամբիոններ | 2015-2018 ուս տարի | ՈՒսումնական պրոցեսի կատարելագործում | |
| | 3. Լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում և ներդնում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՈՒսումնական վարչություն, | 2015-2018 ուս տարի | | |
| | 4. Ուսանողների ներգրավում Քիմիական և դեղագործական արտալսարանային պրակտիկ գիտահետազոտական ծրագրերում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | Գիտական լաբորատորիա, | 2015-2018 ուս տարի | | |
| 4. ՈՒսանողների աշխատանքի հնարավորությունների ստեղծում | 1.Պատվիրատուի և համապատասխան կազմակերպությունների հետ կապի սերտացում և համատեղ ծրագրերի իրականացում: | Քիմիայի ամբիոն | ՈՒսումնական վարչություն, Պատվիրատու և համապատասխան կազմակերպություններ | 2015-2018 ուս տարի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2.Ուսումնարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում և պրակտիկան իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ պրակտիկայի ուսումնամեթոդական բազայի վերանայում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, պրակտիկան իրականացնող կազմակերպությունների | 2015-2018 ուս տարի | | |
| | 3. Քիմիայի և դեղագործական քիմիայի ոլորտներին առնչվող պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում աշխատանքի հնարավորությունների ստեղծման նպատակով | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, մասնագիտության ոլորտի կազմակերպություններ | 2015-2018 ուս տարի | | |
| **Գիտահետազոտական գործունեություն** | | | | | | |
| 1. Դասախոսների գիտահետազոտական գործունեության ակտիվացում | 1. Մասնագիտական թեմաներով ներֆակուլտետային, միջֆակուլտետային հանդիպում-քննարկումների կազմակերպում /գիտագործնական սեմինարներ, գիտական զեկուցումներ և այլն/ | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, համալսարանի ֆակուլտետներ | 2015-2018 ուս տարի | | |
| | 2 .Աջակցություն միջազգային գիտական Համագործակցության ծրագրերին /հետազոտական դրամաշնորհներ, Դրամաշնորհային ծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/:միջբուհական, հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում և աջակցություն մասնակցություն հանրապետությունում և արտերկրում հրավիրվող հեղինակավոր գիտաժողովներին մասնակցելու ծրագրերին: | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, | 2015-2018 ուս տարի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 3. Լաբորատորիաների ժամանակակից գիտահետազոտական և ուսումնական սարքավորումներով համալրում: | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, | 2015-2018 ուս տարի | | |
| 2. Ուսանողների գիտահետազոտական գործունեության ակտիվացում | 1. Ամբիոնին կից ուսանողական գիտական ընկերության գիտական խորհրդի ստեղծում, | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | Կենսաբան ամբիոն, | 2015-2018 ուս տարի | | |
| | 2. Դասախոսների և ուսանողների համատեղ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | Կենսաբան ամբիոն, | 2015-2018 ուս տարի | | |
| | 3. Գիտական հոդվածների հրատարակում, ուսանողական գիտաժողովների կազմակերպում: | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, կենսաբան ամբիոն, | 2015-2018 ուս տարի | | |
| | 4. Ֆակուլտետի ուսանողների և Համալսարանի հենակետային վարժարանի բարձր դասարանների աշակերտների միջև համատեղ գիտակրթական միջոցառումների իրականացում | Քիմիայի ամբիոն, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ | ՌԻսումնական վարչություն, հենակետային վարժարանի | 2015-2018 ուս տարի | | |

Քիմիայի ամբիոնի վարիչ՝ Հ.Ա. Ղազարյան